ՏԵՂԵԿԱՆՔ

Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի վերաբերյալ

2016թ. ապրիլի 5-ին Հայաստանի Հանրապետության, ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ), Ծրագրի շահառու համայնքապետարանների և Բանկի միջև ստորագրվել են «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) վարկային, իրականացման և աջակցության համաձայնագրերը, որով չեղարկվել է Հայաստանի Հանրապետության և Բանկի, Բանկի և ՀՀ Կոտայքի մարզի քաղաքային բնակավայրերի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի, Բանկի և ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի միջև 2014թ. դեկտեմբերի 19-ին ստորագրված Ծրագրի համաձայնագրերը՝ ծրագիրը ընդլայնելու և ՀՀ Գեղարքունիքի մարզի մնացած համայնքները ծրագրում ներառելու նկատառումով:

2016թ. հունիսի 21-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը որոշեց, որ «Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև 2016թ. ապրիլի 5-ին ստորագրված «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 5-րդ գումարման 2016թ. հունիսի 27-30-ի արտահերթ նստաշրջանում քննարկվել և վավերացվել է Ծրագրի վարկային համաձայնագիրը՝ կողմ՝ 88, դեմ՝ 9, ձեռնպահ՝ 12 քվեարկության արդյունքներով:

Ծրագրի շրջանակում նախատեսված «Կորպորատիվ զարգացում, շահառուների մասնակցություն և համայնքային աջակցության ծրագիր» (CorporateDevelopment, Stakeholder Participation and Municipality Support Programme) և «Ծրագրի իրականացման աջակցություն» (Project Implementation Support) խորհրդատվական ծառայությունների մատուցման համար ստորագրման ընթացակարգեր են անցնում տեխնիկական աջակցության երկու դրամաշնորհային համաձայնագրեր և երկու խորհրդատվական պայմանագրեր, համապատասխանաբար՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության, որպես Պատվիրատուի, և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Տեխնիկական Համագործակցության, որպես ֆինանսավորող կողմի, և Պատվիրատուի ու խորհրդատվական ծառայությունների մատուցման համար ընտրված դանիական ՔՈՎԻ (COWI A/S) և ավստրիական Հիդրո Ինջիներինգ (Hydro Ingenieure Umwelttechnik GmbH) խորհրդատվական ընկերությունների միջև:

Մրցութային առաջարկները գնահատելու արդյունքում ընտրված 2 խորհրդատվական ընկերությունները ծրագրի համար նախատեսված տեխնիկական աջակցության դրամաշնորհային բաղադրիչի շրջանակում կառուցվող աղբավայրի շահագործող ընկերության կառավարման և աղբավայրի կառուցման խորհրդատվական ծառայություններ են մատուցելու ծրագրի շահառու համայնքներին, հետագայում կառավարման ընկերությանը:

Ծանոթություն:

2014թ. հունիսի 16-ին ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նշանակվել էր «Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարման ծրագրի» 2-րդ փուլի միջոցառումների կազմակերպման նպատակով ծրագրի պատասխանատու:

Ծրագրի նպատակն է կառուցել և շահագործել ԵՄ չափանիշներին համապատասխան տարածաշրջանային աղբավայր Հրազդանում, որտեղ կհավաքվի ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում գոյացած աղբը:

Ծրագրի արժեքը՝ 11 մլն. Եվրո, որից 5,5 մլն.՝ վարկային միջոց, 5,5 մլն.՝ դրամաշնորհ:

Ծրագրի շահառուներ՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի, Բյուրեղավանի, Եղվարդի, Ծաղկաձորի, Նոր Հաճընի, Հրազդանի, Չարենցավանի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի, Մարտունու, Վարդենիսի և Ճամբարակի համայնքներ: